Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2022 թվականի
սեպտեմբերի 15-ի N 161 -Ա որոշման

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Գյումրի « » _____ **2022թ.**

ԳՅՈՒՄՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ՝ ի դեմս համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանի (այսուհետ՝ «Համայնքապետարան»), և **«ԱՄՍՏԱԼ» ՍՊԸ-ն** (Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմնադրված և գործող ընկերություն՝ գրանցված ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում 25.08.2022թ., գրանցման համար՝ 29,110,1260547)՝ ի դեմս տնօրեն Համլետ Խաչատրյանի (այսուհետ՝ «Ընկերություն») կնքում են սույն Փոխըմբռնման հուշագիրը հետևյալի մասին.

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվի առնելով, որ Ընկերությունը նպատակ ունի Գյումրիի տարածքում ստեղծել գործարանային կոմպլեքս, որտեղ արտադրվելու են արագ կառուցվող կառույցների շրջանակների համար անհրաժեշտ պողպատացինկային պրոֆիլի շինարարական բոլոր նյութերը, ինչի շնորհիվ հնարավորություն կստեղծվի անհամեմատ մատչելի արժեքներով կառուցել բնակելի տներ, դպրոցներ, մանկապարտեզներ և ցանկացած այլ տեսակի շինություններ (այսուհետ՝ «Ծրագիր»)՝ նաև նպաստելով Գյումրիում աշխատատեղերի ստեղծմանը:

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Հուշագրով Կողմերը համաձայնում են համագործակցել Ծրագրի իրականացման ուղղությամբ ստորև նշված պայմաններով.

1.1.1. Համայնքապետարանն աջակցում է Ընկերության նախաձեռնությանը և պատրաստակամ է ծրագրի իրականացման համար տրամադրել հողատարածք 50 տարի ժամկետով:

1.1.2. «Արմստալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվում է իրականացնել 6.150.000.000/վեց մլրդ հարյուր հիսուն մլն ՀՀ դրամ (15.000.000/տասնհինգ մլն ԱՄՆ դոլար) արժողությամբ ներդրումային ծրագիր և ստեղծել մինչև 1.000 / հազար/ աշխատատեղ՝ արտադրության և շինարարական ծառայությունների ոլորտում:

1.1.3. Ներդրումային ծրագրի առաջին փուլը (գործարանի կառուցում, արտադրանքի թողարկում) նախատեսվում է իրականացնել 3 ամսում:

1.1.4. Գործարանի կառուցումից շուրջ 9 ամիս հետո նախատեսվում է ջերմամեկուսիչ նյութերի և գիպսակարդոնի արտադրություն:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն հուշագիրը կարգավորվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

2.2 Սույն Հուշագրի կապակցությամբ Կողմերի միջև առաջացած տարաձայնությունները կարգավորվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

2.3 Սույն Հուշագրի փոփոխությունները և լրացումները համարվում են վավեր, եթե դրանք կատարվում են Կողմերի կողմից լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

2.4 Սույն հուշագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենդրությամբ:

2.5 Հուշագիրը կազմված է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող բնօրինակից՝ կողմերից յուրաքանչյուրի համար մեկական օրինակ:

«ԱՄՍՏԱԼ» ՍՊԸ	ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՏՆՕՐԵՆ ՀԱՄԼԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ
Ստորագրություն՝	**Ստորագրություն՝**